ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 03.12.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/96

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, քննելով «Հ.Կ.Շ.Ի.Կ» ՓԲԸ-ի կողմից 14.11.2018թ. ներկայացված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2018/96 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. **«Հ.Կ.Շ.Ի.Կ» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«Հ.Կ.Շ.Ի.Կ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) 14.11.2018թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ Արևաշատի համայնքապետարանի (այսուհետ՝ Պատվիրատու) կարիքների համար կազմակերպվել է «ԱՄ ԱԳ ԳՀԱՇՁԲ 18/02» ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին ի թիվս այլ մասնակիցների մասնակցության հայտեր են ներկայացրել ինչպես՝ «Հ.Կ.Շ.Ի.Կ» ՓԲԸ-ն, այնպես էլ «ԳՐԱՆՏ ՇԻՆ»ՍՊԸ-ն և «ՌԱԴԻԿ ՇԻՆ» ՍՊԸ-ն (կոնսորցիում):

Համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.11.2018թ. ժամը 17:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 4-րդ կետի՝ «ԳՐԱՆՏ ՇԻՆ» ՍՊԸ-ի և «ՌԱԴԻԿ ՇԻՆ» ՍՊԸ-ի (կոնսորցիում) ներկայացված համատեղ հայտը գնահատվել է բավարար:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացին կազմակերպման մասին» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը.

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատաս-խանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին

էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ընթացակարգի հրավերի 5.2-րդ կետի համաձայն՝ եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա ներկայացվող գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:

ՀՀ հարկային օրենսգրքի 8-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ շրջանառության հարկի համակարգի շրջանակներում կազմակերպությունները հարկվում են ԱԱՀ-ին և (կամ) շահութահարկին փոխարինող շրջանառության հարկով, իսկ անհատ ձեռնարկատերերը և նոտարները՝ շահութահարկով և ԱԱՀ-ին փոխարինող շրջանառության հարկով, բացառությամբ արտոնագրային հարկով հարկման օբյեկտ համարվող գործունեության տեսակների:

ՀՀ հարկային օրենսգրքի 31-րդ հոդվածի համաձայն՝ կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը իրավունք ունեն իրենց համատեղ գործունեությունն իրականացնելու առանց նոր իրավաբանական անձ կազմավորելու՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված՝ համատեղ գործունեության պայմանագրի շրջանակներում:

ՀՀ հարկային օրենսգրքի 253-րդ հոդվածի համաձայն՝ շրջանառության հարկը Օրենսգրքի 256-րդ հոդվածով սահմանված՝ հարկման օբյեկտ համարվող գործունեության տեսակների իրականացման համար Օրենսգրքով սահմանված կարգով, չափով և ժամկետներում պետական բյուջե վճարվող՝ ԱԱՀ-ին և (կամ) շահութահարկին փոխարինող պետական հարկ է: Ռեզիդենտ առևտրային կազմակերպությունների համար շրջանառության հարկը փոխարինում է ԱԱՀ-ին և (կամ) շահութահարկին: Շրջանառության հարկի մեջ շահութահարկի հաշվարկային մեծությունն ընդունվում է 40 տոկոս, իսկ ԱԱՀ-ի հաշվարկային մեծությունը՝ 60 տոկոս:

ՀՀ հարկային օրենսգրքի 254-րդ հոդվածի 7-դ մասի համաձայն՝ շրջանառության հարկ վճարողներ չեն կարող համարվել Օրենսգրքի 31-րդ հոդվածով սահմանված՝ համատեղ գործունեության պայմանագրի, ինչպես նաև ապրանքների մատակարարման՝ կոմիսիայի կամ ապրանքների մատակարարման՝ գործակալի անունից հանդես գալու

պայման նախատեսող գործակալության պայմանագրի կողմ հանդիսացող կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները:

Այսպիսով, ինչպես արդեն նշվել է «ԳՐԱՆՏ ՇԻՆ» ՍՊԸ-ն և «ՌԱԴԻԿ ՇԻՆ» ՍՊԸ-ն (կոնսորցիում) վերոնշված ընթացակարգին մասնակցել են համատեղ գործունեության պայմանագրի հիման վրա, ինչի պայմաններում եթե անգամ նշված մասնակիցները մինչև համատեղ գործունեության պայմանագիր կնքելը հանդիսացել են շրջանառության հարկ վճարողներ, ապա ՀՀ հարկային օրենսգրքի 254-րդ հոդվածի 7-դ մասի ուժով՝ համատեղ գործունեության պայմանագիր կնքելու արդյունքում վերջիններս այլևս չեն կարող համարվել շրջանառության հարկ վճարողներ: Իսկ քանի որ ՀՀ հարկային օրենսգրքի 8-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի և 253-րդ հոդվածի համաձայն՝ շրջանառության հարկին փոխարինում է ԱԱՀ, ուստի համատեղ գործունեության պայմանագիր կնքելու ուժով՝ ՀՀ հարկային օրենսգրքի 254-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ համատեղ գործունեության պայմանագրի կողմերը՝ այլևս չեն կարող համարվել շրջանառության հարկ վճարող և որպես հետևանք՝ դարձել են ԱԱՀ վճարող ընկերություններ:

Այսպիսով, համատեղ գործունեության պայմանագիր կնքելու ուժով նշված ընկերությունների կողմից ներկայացված գնային առաջարկի հիման վրա կնքվող գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, սակայն ինչպես արդեն նշվել է, գնային առաջարկում առանձնացված տողով չի նախատեսվել այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:

Ավելին ՀՀ ֆինանսների նախարարությունը մեկ այլ ընթացակարգի շրջանակներում նույնպես անդրադարձել է կատարել համատեղ գործունեության պայմանագիր կնքելու ուժով՝ ընկերությունների կողմից ներկայացված գնային առաջարկին, որում մասնավորապես նշվում է՝ հայտնում ենք, որ համատեղ գործունեության պայմանագրի կողմերը համարվում են ԱԱՀ վճարողներ, հետևաբար վերջիններիս կողմից ներկայացված գնային առաջարկն իր մեջ պետք է ներառի ԱԱՀ, եթե Օրենսգրքի 64-րդ հոդվածի համաձայն՝ գործարքն ազատված չէ ԱԱՀ-ից կամ 65-րդ հոդվածի համաձայն՝ չի համարվում ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափով հարկվող գործարք:

Հատկանշական է նաև այն հանգամանքը, որ նման մոտեցում ունի նաև ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ 30.08.2018թ. կայացարած թիվ ՍՑ-ԷՍ-2018/119 որոշմամբ: Մասնավորապես, բողոքը քննող անձ Է. Սարգսյանը արձանագրել է, որ կոնսորցիումի մասնակիցների կողմից ներկայացված հայտը (գնային առաջարկը) չի համապատասխանում հրավերի պահանջներին (լրացված չի եղել ԱԱՀ-ի դաշտը), ուստի ըստ բողոքը քննող անձի՝ նշված հայտը Կարգի 40-րդ կետի ուժով պետք է մերժվեր:

Վերոհիշյալից ուղղակի հետևում է, որ «ԳՐԱՆՏ ՇԻՆ» ՍՊԸ-ի և «ՌԱԴԻԿ ՇԻՆ» ՍՊԸ-ի (կոնսորցիում) կողմից ներկայացրած համատեղ գնային առաջարկը հակասում է Ընթացակարգի հրավերի 5.2-րդ կետով նախատեսված պահանջներին, ինչպես նաև Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջների, և Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի և 41-րդ կետի համաձայն՝ որպես հետևանք վերջինիս հայտը պետք է մերժվեր:

Ընկերությունը բողոքով խնդրել է դադարեցնել «ԱՄ ԱԳ ԳՀԱՇՁԲ 18/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կայացված «ԳՐԱՆՏ ՇԻՆ» և «ՌԱԴԻԿ ՇԻՆ» ՍՊ ընկերությունների կոնսորցիումի հայտով ներկայացված փաստաթղթերը հրավերով սահմանված պահանջներին համապատասխան գնահատելու մասին որոշումը:

«Հ.Կ.Շ.Ի.Կ» ՓԲԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 16.11.2018թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

<u>2. Արևաշատի համայնքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

Արևաշատի համայնքապետարանը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 16.11.2018թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, «ԳՐԱՆՏ ՇԻՆ» և «ՌԱԴԻԿ ՇԻՆ» ՍՊ ընկերությունների հայտը գնահատելիս, առաջնորդվել է գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներով: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կոնսորցիումի հայտը համապատասխանել է

հրավերի պահանջներին, գնահատող հանձնաժողովի կողմից այն գնահատվել է բավարար:

3. ԳԲԽ-ԱՄ-2018/96 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-ԱՄ-2018/96 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Արևաշատի համայնքապետարանի կողմից Արևաշատի համայնքապետարանի կարիքների համար գերեզմանատան պարսպապատման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԱՄ ԱԳ ԳՀԱՇՁԲ 18/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցության հայտ է ներկայացրել «ԳՐԱՆՏ ՇԻՆ» և «ՌԱԴԻԿ ՇԻՆ» ՍՊ ընկերությունների կոնսորցիումը (այսուհետ՝ Կոնսորցիում):

2. Կոնսորցիումը հայտի թիվ 4 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ, որի «ԱԱՀ» դաշտը չի լրացվել:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.11.2018թ. ժամը 17:00-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «ԳՐԱՆՏ ՇԻՆ» և «ՌԱԴԻԿ ՇԻՆ» ՍՊ ընկերությունների կոնսորցիումի հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով «Հ.Կ.Շ.Ի.Կ» ՓԲԸ-ի կողմից 14.11.2018թ. բողոքը, «ԳՐԱՆՏ ՇԻՆ» և «ՌԱԴԻԿ ՇԻՆ» ՍՊ ընկերությունների կոնսորցիումի գնային առաջարկը, «ԱՄ ԱԳ ԳՀԱՇՁԲ 18/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով

նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձին տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն մասում նշված հարկի գումարի հաշվարկման:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացին կազմակերպման մասին» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին

անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Արևաշատի համայնքապետարանի կողմից Արևաշատի համայնքապետարանի կարիքների համար գերեզմանատան պարսպապատման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԱՄ ԱԳ ԳՀԱՇՁԲ 18/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցության հայտ է ներկայացրել «ԳՐԱՆՏ ՇԻՆ» և «ՌԱԴԻԿ ՇԻՆ» ՍՊ ընկերությունների կոնսորցիումը:

Կոնսորցիումը հայտի թիվ 4 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ, որի «ԱԱՀ» դաշտը չի լրացվել:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.11.2018թ. ժամը 17:00-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «ԳՐԱՆՏ ՇԻՆ» և «ՌԱԴԻԿ ՇԻՆ» ՍՊ ընկերությունների կոնսորցիումի հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին:

ՀՀ Հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 31-րդ հոդվածի համաձայն՝ կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը իրավունք ունեն իրենց համատեղ գործունեությունն իրականացնելու առանց նոր իրավաբանական անձ կազմավորելու՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված՝ համատեղ գործունեության պայմանագրի շրջանակներում:

Օրենսգրքի 58-րդ հոդվածի համաձայն՝ ավելացված արժեքի հարկը Օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված՝ հարկման օբյեկտ համարվող գործարքների և (կամ) գործառնությունների իրականացման համար Օրենսգրքով սահմանված կարգով, չափով և ժամկետներում պետական բյուջե վճարվող պետական հարկ է:

Օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ եթե սույն հոդվածի 2-րդ, 2.1-ին և 3-րդ մասերով այլ բան սահմանված չէ, ապա ԱԱՀ վճարողներ են համարվում սույն հոդվածի 4-րդ մասի 1-ին կետին համապատասխան հարկային մարմնում որպես ԱԱՀ վճարող հաշվառված կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները՝ հետևյալ դեպքերում և ժամկետներում.

1) տվյալ հարկային տարվա հունվարի 1-ից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը, եթե հարկ վճարողը տվյալ հարկային տարվա հունվարի 1-ի դրությամբ, Օրենսգրքի 13-րդ բաժնի համաձայն, չի կարող համարվել շրջանառության հարկ վճարող կամ Օրենսգրքի 13-րդ բաժնով սահմանված ժամկետում հարկային մարմին չի ներկայացրել հարկային մարմնի հաստատած ձևով շրջանառության հարկ վճարող համարվելու և հարկային մարմնի հաստատած ձևով ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարություն.

2) հարկային տարվա ընթացքում պետական գրանցում ստացած (օրենքով սահմանված դեպքերում՝ հաշվառված) կազմակերպությունը կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառված կամ որպես նոտար նշանակված ֆիզիկական անձը՝ համապատասխանաբար, պետական գրանցման (օրենքով սահմանված դեպքերում՝ հաշվառման) կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառման կամ որպես նոտար նշանակման օրվանից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը, եթե հարկ վճարողը համապատասխանաբար պետական գրանցման (օրենքով սահմանված դեպքերում՝ հաշվառման) կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառման կամ որպես նոտար նշանակման օրվա դրությամբ, Օրենսգրքի 13-րդ բաժնի համաձայն, չի կարող համարվել շրջանառության հարկ վճարող կամ Օրենսգրքի 13-րդ բաժնով սահմանված ժամկետում հարկային մարմին չի ներկայացրել հարկային մարմնի հաստատած ձևով շրջանառության հարկ վճարող համարվելու և հարկային մարմնի հաստատած ձևով ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարություն.

Օրենսգրքի 253-րդ հոդվածի 1-2-րդ մասերի համաձայն՝

1. Շրջանառության հարկը Օրենսգրքի 256-րդ հոդվածով սահմանված՝ հարկման օբյեկտ համարվող գործունեության տեսակների իրականացման համար Օրենսգրքով սահմանված կարգով, չափով և ժամկետներում պետական բյուջե վճարվող՝ ԱԱՀ-ին և (կամ) շահութահարկին փոխարինող պետական հարկ է:

2. Ռեզիդենտ առևտրային կազմակերպությունների համար շրջանառության հարկը փոխարինում է ԱԱՀ-ին և (կամ) շահութահարկին:

Օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ ***շրջանառության հարկ վճարողներ չեն կարող համարվել Օրենսգրքի 31-րդ հոդվածով սահմանված՝***

համատեղ գործունեության պայմանագրի, ինչպես նաև ապրանքների մատակարարման՝ կոմիսիայի կամ ապրանքների մատակարարման՝ գործակալի անունից հանդես գալու պայման նախատեսող գործակալության պայմանագրի կողմ հանդիսացող կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները:

Դրա հետ մեկտեղ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ, եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձին տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 5-րդ կետի 5.2-րդ ենթակետով սահմանվել է, որ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա ներկայացվող գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:

Այսպիսով, ուսումնասիրելով «ԳՐԱՆՏ ՇԻՆ» և «ՌԱԴԻԿ ՇԻՆ» ՍՊ ընկերությունների կոնսորցիումի կողմից ներկայացված գնային առաջարկը, ինչպես նաև հիմք ընդունելով վերոհիշյալ նորմերն, արձանագրում եմ, որ «ԳՐԱՆՏ ՇԻՆ» և «ՌԱԴԻԿ ՇԻՆ» ՍՊ ընկերությունները որպես համատեղ գործունեության պայմանագրի կողմեր, համարվում են ԱԱՀ վճարող, ուստի վերջիններիս կողմից ներկայացված գնային առաջարկն իր մեջ պետք է ներառի պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի գումարը:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Ընդ որում՝ Կարգի 41-րդ կետի համաձայն՝ գնային առաջարկում տեղ գտած անհամապատասխանությունն ենթակա չէ շտկման, հետևաբար գտնում եմ, որ «ԳՐԱՆՏ ՇԻՆ» և «ՌԱԴԻԿ ՇԻՆ» ՍՊ ընկերությունների կոնսորցիումի հայտը՝ գնային առաջարկի

մասով ենթակա է մերժման, քանի որ վերջինիս մեջ առանձին տողով չի նախատեսվել պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի գումարը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ «Հ.Կ.Շ.Ի.Կ» ՓԲԸ-ի կողմից 14.11.2018թ. բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Հ.Կ.Շ.Ի.Կ» ՓԲԸ-ի կողմից 14.11.2018թ. ներկայացված բողոքը բավարարել. պարտավորեցնել «ԱՄ ԱԳ ԳՀԱՇՁԲ 18/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի դադարեցնել «ԳՐԱՆՏ ՇԻՆ» և «ՌԱԴԻԿ ՇԻՆ» ՍՊ ընկերությունների կոնսորցիումի հայտը՝ գնային առաջարկի մասով հրավերի պահանջներին համապատասխանող գնահատելու մասին որոշումը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**